Արձանագրություն N 2

ՀԾԿՀ-19/5-ԳՀԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

7 նոյեմբերի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Մեսրոպ Ղարիբյանը, Անուշ Սմբատյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը, բացակայում էր Նունե Գաբրիելյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

ՀԾԿՀ-19/5-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը				
	«ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ ք.Երևան, Ֆուչիկի փող., 27/2 շենք	«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ ք.Երևան, Դավիթ Անհաղթի փող., 23/6 շենք, 5-րդ հարկ, սեն.7	«Հայաուդիտ» ՍՊԸ ք.Երևան, Գրիգոր Լուսավորչի փող. 15/1	«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ ք.Երևան, Վարդանանց փող., 18/1 շենք, 3-րդ հարկ, տարածք 54	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ ք.Երևան, Նալբանդյան փող., 48/1 շենք, 5-րդ հարկ
	ԱԱՀ չվճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող
	Գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/				
1	4200000	6500000	7000000	7950000	9400000

Հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված հայտերը և արձանագրեց, որ **«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացրած դիմում հայտարարության / Հավելված 1/ 1-ին կետում բացակայում է առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով պահանջվող որակավորումը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասը: Մնացած մասնակիցների ներկայացրած հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց իրականացնել հայտերի գնահատումը:

Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

«ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել:

«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ին՝

- 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել:

«Հայաուդիտ», «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» և «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ների ներկայացված գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել, ինչպես նաև 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացությունը տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0, բացակա 1:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Մեսրոպ Ղարիբյան
	_____	Անուշ Սմբատյան
քարտուղար	_____	Էդգար Շադյան